ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին, Գայի -1.
Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel. 060-75-77-87
E-mail : talinihamaynqapetaran@list.ru

№ 056/2689

23 07 2024թ.

«Ֆասթ տրանսպորտ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Ն.Հովհաննիսյանին
Հասցեն՝ Ք.Երևան Նորաշեն թղմ շ 12 բն 63
Հեռ 093-94-84-14
hovhannisyannarek2020@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Թալինի համայնքապետարանի և «**Ֆասթ տրանսպորտ**» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հուլիսի 08-ին կնքված «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/79» ծածկագրով, Թալին համայնքի Պարտիզակ բնակավայրի 1-ին փողոց 45/1 հասցեում խոհանոցի սանհանգույցի և ծածկի կառուցման և սենյակի վերանորգման աշխատանքների ձեռքբերման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում սույն պայմանագրով սահմանված կարգով կատարել շինարարական աշխատանքներ հավելված 1-ով նախատեսված ծավալաթերթին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

«**Ֆասթ տրանսպորտ**» ՍՊ ընկերության կողմից 22.07.2024թ-ին ստացվել է գրություն համաձայն որի Ընկերությունը ծանրաբեռնվածության պատճառով չի կարող կատարել պայմանագրով նախատեսված պարտականությունները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել Կապալառուից հատուցելու իրեն

պատճառված վնասները եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե աշխատանքները չեն կատարվում կամ կատարվում են ոչ պատշաճ խախտելով պայմանագրով սահմանված պարտականությունները և ժամկետները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Ֆասթ տրանսպորտ»** ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները և պայմանագրի 8.11 կետը:*

ՀԱՐԳԱՆՔՈՎ
Թալին համայնք ղեկավար **Տ.Սափեյան**

Կատարող
Ա.Հովհաննիսյան
Հեռ.+374/93637127